

սաղէմի միաբանները միաձայնութեամբ Պատրիարք կ'ընտրեն Մինաս Ամթեցին եւ զայն կը հրաւիրեն Երուսաղէմ՝ իր աթոռը գրաւելու: Չայս կը հաստատէ նոյնինքն Շ. Ն. Ակինեանի մէջըրեթժ Երեւանի թ. 579 Մինաս Ամթեցու (էջ 582) ձեռագիրը «Արդ ի Ռձեկէ (1698) քուականին Հայոց ես պիտակ Մինաս վարդապետս... Ես յարեւելից տանէն չուեալ հասի ի Կ. Պոլիս (1698 Հոկտ. 24ին) ըստ խնդրոյ յամենայն քաղաքացոց արգիւ եւ մահնաբով վասն առաջնորդութեան գործառնութեան ընտրեալ զանարժանութիւնըս մեր որպէս որ յառաջագոյն խնդրեալ էին եւ մեք եւս վասն այն գործառնութեան կայաք (յ)ումանց եկամտից արանց բազում նեղութիւնս կրեցաք յայսմ ամի: Յետ որոյ կրկին հրաւիրեցաք առաջնորդ ի սուրբ Երուսաղէմի (Անդ, սիւն 329):

Ի դէպ, այս յիշատակարանը կը բացայայտէ նաեւ, թէ ս'րբան ճիշտ է մեր վանքին պատմագիր Տ. Մովսէսը, երբ կ'ըսէ — «... եւ յետոյ ժառանգեց կուստանդնուպոլսոյ եւ Երուսաղէմի Պատրիարքական արքոսը...» (թ. Ա. Բ., էջ 459): Յամենայն դէպս, 1698ը ճանչցուած է գահակալութեան թուական Մինաս Ամթեցու Երուսաղէմի Պատրիարքութեան:

Առ ի հետաքրքրութիւն, Շ. Ն. Ակինեանի սխալած ըլլալու որպէս փաստ, ըստ որեւ մտրոջութեամբ կ'արտատպենք իր ակնարկած «ԵՐԳԻԾԱԿԱՆ»ը. —

«Պալուստ Ամասեան,
կայծակ կոչի մականուան,
եկեալ քաղաքն Բիւզանդեան

Անդրեան քարոզէր ժողովրդեան,
նա կացուցին առ ստեան,
արարին վեհ սուրբ տանն այն,
... ոմն Մինաս սիրուն քան
կօնայ գէնկին սրբազան
պարծեցաւ ունիմ շատ բան
բազում փող մըսխեալ ունայն
առաւել պտուրիւնն յինքեան...
(ս)պառեցաւ եղաւ ունայն,
զի կայծակն էր բարեկամ,
եղեալ էջմիածնայ տան
եկեալ ի Բիւզանդեան
Գալլստին հետ հաշտութեան
Լինել հայր, որդի եւ քան.
ումանք անօրէն անբան
անէժ յերկնից ընկալան:
Աւետիք ոմն եարան՞
քիւր... եւ անպիտան...

Այս անկապ ոտանաւորը Պատրիարքական աթոռ մը առաջնորդական աթոռի մը փոխանակելուն հետ ի՞նչ աղերս ունի: Յետոյ, 1696–1698 Եւզոկիա արդէն ունէր իր առաջնորդը՝ յանձին Իգնատիոս վարդապետին: Հետեւաբար, Մինաս Ամթեցին այդ տարիներուն Եւզոկիոյ առաջնորդ չէր կրնար ըլլալ: Այս երգիծականը, եթէ որեւէ բան մը փաստէ, այն է, թէ երբ Մինաս Երուսաղէմի Միաբանութեան կողմէ միաձայնութեամբ պատրիարք ընտրուած էր, Պալուստ կայծակ խոհեմութիւն նկատած էր իր չարաչահութիւններէն հրաժարիլ եւ հաշտուիլ իրակառնութեան հետ:

(Շար. 1)
ԳԱՌՆԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ

6. Այս այն Աւետիք (վարդապետ)ն է, որ յեցած իր կաշառակեր հայրենակից Սատրապամին, Կ. Պոլսոյ եւ Երուսաղէմի Պատրիարքութիւնները իր անձին վրայ միացուց եւ Մինաս Ամթեցին

պաշտօնանկ ըրաւ ու երկը շարաթ բանտարկել եւ չարչարել տուաւ՝ անկէ գրամ պահանջելով...: